



ԱՄՇ գործադիր խորհուրդն ավարտում է «Պահուստային ծրագրի» չորրորդ ամփոփիչ ստուգումը Հայաստանի հետ

ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

- ԱՄՇ գործադիր խորհուրդն ավարտում է «Պահուստային ծրագրի» (SBA) չորրորդ ամփոփիչ ստուգումը՝ երկրին հասանելի դարձնելով 18.4 միլիոն փոխառության հատուկ իրավունք (ՓՀԻ) (մոտավորապես 24.12 միլիոն ԱՄՆ դոլար):
- Հայաստանի տնտեսության դրական հեռանկարը պահպանվում է, թեև աստիճանաբար չափավոր է դառնում. կանխատեսվում է, որ 2024 թ. աճը կկազմի շուրջ 6 տոկոս և 2025 թ. -ին՝ շուրջ 5 տոկոս, ցածր գնաճի հետ միասին:
- «Պահուստային ծրագիրը», որը ՀՀ իշխանությունների կողմից կանխարգելիչ է համարվում, նպատակ ունի օժանդակելու կառավարության քաղաքականության և բարեփոխումների օրակարգին՝ տնտեսական և ֆինանսական կայունություն պահպանելու և բարձր, ներառական և կայուն աճին օժանդակելու համար:

Վաշինգտոն, ԿՇ – դեկտեմբերի 16, 2024 թ. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՇ) խորհուրդն ավարտեց Հայաստանի հետ «Պահուստային ծրագրի» ([Stand-By Arrangement](#) (SBA) չորրորդ ամփոփիչ ստուգումը: Ամփոփիչ ստուգման ավարտը տալիս է 18.4 միլիոն ՓՀԻ-ից (մոտավորապես 24.12 միլիոն ԱՄՆ դոլար) օգտվելու հնարավորություն՝ ընդհանուր հասանելիությունը հասցնելով 92.0 միլիոն ՓՀԻ-ի (մոտավորապես 120.59 միլիոն ԱՄՆ դոլար): «Պահուստային ծրագիրը» ԱՄՇ խորհրդի կողմից հաստատվել է 2022 թ. դեկտեմբերի 12-ին (տե՛ս թիվ 22/429 մամուլի հաղորդագրությունը ([Press Release No. 22/429](#)): Հայաստանի իշխանությունները շարունակում են ծրագիրը կանխարգելիչ համարել:

Հայաստանի տնտեսությունը շարունակում է պահպանել դրական հեռանկարը՝ չնայած վերջին տարիների բազմակի ցնցումներին: Ներքին բարձր պահանջարկի շնորհիվ իրական ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է, որ 2024 թ. կհասնի 6 տոկոսի և 2025 թ. ավելի չափավոր կդառնա՝ հասնելով շուրջ 5 տոկոսի: Միջնաժամկետ հեռանկարում կանխատեսվում է, որ աճի տեմպը կդանդաղի մինչև 4.5 տոկոս՝ թեև կառուցվածքային բարեփոխումների արագացումը կարող է բարձրացնել աճի ներուժը: Կանխատեսվում է, որ կարճաժամկետ հատվածում գնաճը ՀՀ կենտրոնական բանկի թիրախից ցածր կմնա և միջնաժամկետ հատվածում աստիճանաբար կբարձրանա դեպի իր թիրախը: Արտաքին և ֆինանսական հատվածի բուֆերները շարունակում են մնալ բարձր:

Ծրագիրն ընդհանուր առմամբ ընթանում է իր հունով: 2024 թ. հունիսի վերջի համար նախատեսված կատարողականի բոլոր քանակական չափորոշիչները և կողմնորոշիչ թիրախներն ապահովվել են, թեև սպասվածից ցածր գնաճը խախտել է Դրամավարկային քաղաքականության շուրջ խորհրդակցության դրույթով (MPCC) նախատեսված միջակայքի ստորին սահմանը: Իշխանությունները 2025 թ. բյուջեն ընդունել են ՀՆԱ-ի 5.5 տոկոսը կազմող բյուջեի ընդհանուր պակասուրդով՝ ծրագրին համահունչ, ծախսային հրատապ կարիքները բավարարելու համար և մտադիր են 2026 թ.-ին վերսկսել հարկաբյուջետային

համախմբումը: Կառուցվածքային հենանիշների (ԿՀ) ուղղությամբ առաջընթացը շարունակվում է, ընդ որում երկու ԿՀ-ներ իրականացվել են, մեկը գրեթե ավարտվել է, իսկ երկուսը հետաձգվել են մինչև 2025 թ. մարտը:

Գործադիր խորհրդի կողմից այսօրվա քննարկումից հետո Կառավարող փոխտնօրեն և նախագահի պաշտոնակատար պրն. Բո Լին հետևյալ հայտարարությունն արեց.

«Հայաստանի տնտեսական հեռանկարը դրական է, ընդ որում աճը բարձր է, գնաճը՝ ցածր: Ծրագրի կատարողականը բարձր է, սակայն շրջահայաց քաղաքականությունների և բարեփոխման ջանքերի շարունակումը կարևոր են մնում բուֆերների պահպանման և դիմակայության ձևավորման համար՝ դեռևս անորոշ ներքին և արտաքին միջավայրում:

2025 թվականի բյուջեն պատշաճ կերպով հավասարակշռում է մակրոտնտեսական կայունության պահպանումը և փախստականների ինտեգրման և անվտանգության բարձր ծախսերի հետ կապված առաջնահերթ ծախսերի հասցեագրումը: Միջնաժամկետ հատվածում աստիճանական հարկաբյուջետային համախմբումը կարևոր կլինի հարկաբյուջետային կայունության պահպանման համար: Ծրագրավորված միջոցառումները ներառում են եկամուտների ներգրավման ուժեղացումը, ծախսերի առաջնահերթության սահմանումը և միջնաժամկետ ծախսերի շրջանակի ընդունումը: Հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների ուղղությամբ առաջընթացն անհրաժեշտ է հարկաբյուջետային ռիսկերի նվազեցման համար, հատկապես՝ կապված պետական մասնակցությամբ կազմակերպությունների, պետական-մասնավոր գործընկերությունների և պետական երաշխիքների հետ:

Դրամավարկային քաղաքականության դիրքը տեղին է և վերաֆինանսավորման (քաղաքականության) տոկոսադրույքի վերաբերյալ հետագա որոշումներում անհրաժեշտ է առաջնորդվել գնաճի հեռանկարով և գնաճի սպասումներով՝ հաշվի առնելով հեռանկարի անորոշությունը: 2006 թ. գնաճի նպատակադրման ընդունումից ի վեր ՀՀ ԿԲ-ի վստահելիության մեծացումը, գործառնական անկախության ամրապնդումը և դրամավարկային քաղաքականության շրջանակի արդիականացումը լավ համակարգված և հաղորդակցված ռազմավարության ներքո գնաճի թիրախն իջեցնելու հնարավորություն են տալիս: Հկուն փոխարժեքը Հայաստանին լավ է ծառայել արտաքին ցնցումների կլանման հարցում՝ միաժամանակ ստեղծելով պահուստային բուֆերներ:

Բանկային համակարգը շարունակում է առողջ մնալ: Իշխանությունները շարունակում են ուշադիր հետևել ֆինանսական հատվածի ռիսկերին, մասնավորապես՝ անշարժ գույքի շուկայից ծագող ռիսկերին, և ըստ անհրաժեշտության վերաճզգրտել նորմատիվային գործիքները: Ջանքերն անհրաժեշտ է կենտրոնացնել կապիտալի բուֆերների պահպանման, վերահսկողական լիազորությունների և կարողությունների կատարելագործման և ճգնաժամային կառավարումն ուժեղացնելու վրա, այդ թվում՝ բանկերի կարգավորման նոր օրենքի ընդունման միջոցով:

Կառուցվածքային բարեփոխումների առաջնորդը կօժանդակի կայուն և ներառական աճին: Կարևոր են աշխատանքի շուկայում մասնակցության խթանմանն ուղղված շարունակական

ջանքերը, հատկապես երիտասարդների, կանանց և խոցելի խմբերի շրջանում:
Արտահանման բազմազանեցման, բիզնես միջավայրի բարելավման, կառավարման
հզորացման և կլիմայական քաղաքականության առաջնորդմանն ուղղված բարեփոխումները
կարևորագույն նշանակություն ունեն տնտեսական դիմակայունության ամրապնդման և
ներուժային աճի բարձրացման համար»:

Աղյուսակ 1. Հայաստան. ընտրված տնտեսական և ֆինանսական ցուցանիշներ., 2021–29 թթ.

	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029
	Փաստ.			Կանխ.					
Ազգային եկամուտ և գներ.									
Իրական ՀՆԱ (տոկոսային փոփոխություն)	5.8	12.6	8.3	6.0	4.9	4.5	4.5	4.5	4.5
Վերջնական սպառման ծախսեր, նպաստ. աճին	1.2	3.7	7.3	6.7	3.0	3.0	3.0	3.0	3.0
Համախառն հիմն. կապիտալի կուտակում, նպաստ. աճին	4.2	3.0	2.1	2.3	2.1	2.0	2.0	2.0	2.0
Նյութական շրջանառու միջոցների փոփոխություն, նպաստ. աճին	0.0	-0.3	-0.9	-1.4	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում, նպաստ. աճին	0.4	6.2	-0.2	-1.6	-0.1	-0.5	-0.5	-0.5	-0.5
Համախառն ներքին արդյունք (միլիարդ դրամ)	6,992	8,501	9,453	10,161	11,015	11,971	13,010	14,139	15,367
Համախառն ներքին արդյունք (միլիոն ԱՄՆ դոլար)	13,879	19,514	24,086	25,251	26,578	27,418	28,941	30,929	33,203
Համախառն ներքին արդյունք՝ մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	4,685	6,661	8,126	8,518	8,965	9,247	9,760	10,430	11,196
ՍԳԻ (ժամանակահատվածի միջին, տոկոսային փոփոխություն)	7.2	8.7	2.0	0.2	3.1	4.0	4.0	4.0	4.0
ՍԳԻ (ժամանակահատվածի վերջ, տոկոսային փոփոխություն)	7.7	8.3	-0.6	1.0	3.9	4.0	4.0	4.0	4.0
ՀՆԱ դեֆլյատոր (տոկոսային փոփոխություն)	6.9	8.0	2.7	1.4	3.3	4.0	4.0	4.0	4.0
Գործազրկության մակարդակ (տոկոս)	15.5	13.5	12.6	13.0	13.5	14.0	14.0	14.0	14.0
Ներդրումներ և խնայողություններ (տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ)									
Ներդրումներ	23.0	22.4	21.3	20.1	19.9	19.7	19.8	19.9	19.9
Ազգային խնայողություններ	19.5	22.7	19.0	15.5	15.4	15.1	15.0	15.1	15.1
Փող և վարկ (ժամանակահատվածի վերջ)									
Փողի բազա (տոկոսային փոփոխություն)	17.1	5.0	-4.0	9.4	9.0	8.7	8.7	8.7	8.7
Փողի զանգված (տոկոսային փոփոխություն)	13.1	16.1	17.4	14.7	10.7	9.3	9.3	9.3	9.3
Մասնավոր հատվածի վարկավորման աճ (տոկոսային փոփոխություն)	-3.9	4.5	18.4	15.4	11.7	11.1	11.1	11.1	11.1
Կենտրոնական կառավարության գործառնություններ տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ)									
Եկամուտներ և դրամաշնորհներ	24.1	24.3	25.0	25.2	25.3	25.9	25.9	25.5	25.4
որից՝ հարկային եկամուտներ	22.1	21.9	22.5	22.9	23.2	23.4	23.5	23.5	23.5
Ծախսեր	28.7	26.4	27.0	29.9	30.8	30.4	30.2	29.2	29.0
Ընդհանուր հաշվեկշիռը՝ դրամարկղային հիմունքով	-4.6	-2.1	-2.0	-4.8	-5.5	-4.5	-4.3	-3.8	-3.5
Պետական և պետության կողմից երաշխավորված (ՊՊԵ)									
պարտք (տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ)	63.4	49.2	50.7	52.3	55.6	56.3	57.1	57.1	56.4
Կենտրոնական կառավարության ՊՊԵ պարտք (տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ)	60.2	46.7	48.4	49.7	53.3	54.5	55.6	55.5	55.1
Կենտրոնական կառավարության ՊՊԵ պարտքի արտարժույթային մասնաբաժին (տոկոս)	71.2	62.1	54.1	48.5	49.0	48.3	47.6	46.8	46.0
Արտաքին հատված									
Ապրանքների և ծառայությունների արտահանում (միլիոն ԱՄՆ դոլար)	5,040	10,118	14,338	17,435	12,213	12,488	12,402	12,782	13,324
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (միլիոն ԱՄՆ դոլար)	-6,155	-10,265	-14,532	-18,083	-13,216	-13,620	-13,619	-14,110	-14,779
Ապրանքների և ծառայությունների արտահանում (տոկոսային փոփոխություն)	30.7	100.8	41.7	21.6	-30.0	2.3	-0.7	3.1	4.2
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (տոկոսային փոփոխություն)	20.3	66.8	41.6	24.4	-26.9	3.1	0.0	3.6	4.7
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ)	-3.5	0.3	-2.3	-4.5	-4.5	-4.9	-4.8	-4.8	-4.8

ՕՈւն (գուտ, միլիոն ԱՄՆ դոլար)	342	926	527	323	437	454	468	483	507
Համախառն միջազգային պահուստներ (միլիոն ԱՄՆ դոլար)	3,230	4,112	3,607	3,552	3,336	3,354	3,443	3,540	3,737
Ներմուծման ծածկույթ 1/	3.8	3.4	2.4	2.9	2.9	2.9	2.9	2.9	2.9
Ժամանակահատվածի վերջի փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	480	394	405	...	...	...	...	...	...
Միջին փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	504	436	392	...	...	...	...	...	...

Աղբյուրները՝ ՀՀ իշխանությունների և Հիմնադրամի

աշխատակազմի գնահատականներ և կանխատեսումներ

1/. Համախառն միջազգային պահուստները՝ ըստ ապրանքների և ծառայությունների ներմուծման հաջորդ տարվա ամիսների, այդ թվում՝ պահվող ՓՀԻ: